



Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻԻ Ժ. — ՇՐՋԱՆ ԻԱ.

1889

ՏԱՐԻ ԻՐ. ՀՈԿՏԵՄ. 31

ԿՐՈՆԱԿԱՆ



Կ Ի Ր -Ք.

Մարմնաւոր խորհուրդը մահ է, և հոգեւոր խորհուրդը
կեանք ու խաղաղութիւն: Ինչու որ մարմնաւոր խորհուրդն
Աստուծոյ դէմ թշնամութիւն է, նրա համար՝ որ Աստուծոյ
օրէնքին չէ հնազանդում, մանաւանդ որ կարող էլ չէ. պատ-
ճառ որ մարմնով եղիշները չեն կարող Աստուծոյ հաճոյ լինել
(Հաովմ. Ը. 6—9):

Որդին հօրինքը բաժանուելով ու հեռանալով, օտար երկրում շատ տեղեր ազատ մասն է գալիս, ինչպէս և որտեղ որ ինքն ուզում է. նրա ճանապարհը բաց է, նրան արգելող չկայ, որ սրտի ուզած բանը չանի. յորդորողի ու խրատողի ձայնը նրա ականջը չի լսում այլ ևս. նրան չի պահպանում, չի պաշտպանում, որտանց բարեկամի հայրական ձեռքը, Միշտ խրուած մինչև վիզը իւր քաշած վայելչութիւնների մէջ, կատաղի կերպով փչացնում է անառակութիւնով իւր ունեցած՝ չունեցածը, մինչև որ, միշտ աւելի և աւելի տարուելով իւր անցկացրած վատ կեանքից, կանգ է առնում իւր գերեզմանի առաջ։ Մի խոր անդունդք ուղղում է նրան իւր մէջը գլորի, վերջին աստիճանի թշուառութեան ու սարսափելի գրու թեան հասցնելով նրան, բոլոր աշխարհի աչքից ու երեսից ընկե՛լ է։ Ել ո՞վ պէտք է նրան ազտտի կոյնելուց, Այն ժամանակն սկսում է մտածել սեռացած սրտով և երանի տալով իւր անցկացած առաջուայ գեղեցիկ ու փափագելի օրերին, որ իւր հօր տանն էր տեսնում, և իւր ծնած ու մեծացած տեղի կարօտն է սաստիկ քաշում. մտածում է զզջման արտասուքով իւր պատանեկութեան օրերի երջանկութեան վրայ, որ էլ չունի, մի սուրբ ջերմեռանդութիւնով սիրտը լցւած, բորբոքուած, ձեռները վեր է բարձրացնում գէպի երկինք, ու, շուտ վճռելով իւր մտքումը, վերադառնում է վաղուց իւր մոռացած հօր տունն։ Եւ նրա դռներին մօտենում է թէ չէ, առաջուայ միխթարութիւնն, որից որ զրկուած էր, բայց յոյսը չէր կորցրած, որ էլի գտնի, ճշմարտվում է ու հաստատվում իւր բոլոր բարեգուշակ նշանակութիւնովը թէ՛ եթէ որ ամեն ուրիշ բան էլ կորչի, հայրական կարեկից սրտի գութն ու խնամքը միշտ կմնայ ու չի փոխուել, չի կորուել, Հայրը մեղքացող ու սիրով ընդունող սրտով իսկոյն դուրս է գալի նրա առաջն ու գրկում նրան, անէծքի տեղ՝ երկնքի հրեշտակների օրհնութեան և ուրախութեան ձայներն են լսվում։

Ով որ, իւր ուղիղ ու լաւ ճանապարհը թողած, ծուռ ու վատ ճանապարհն է ման գալիս, մոլորուած, ինքն իրան կորցրած, թող ետ դառնայ. դեռ ժամանակ կայ։ Մեր երկնաւոր

Հօր անչափ գթութիւնն ու ողորմութիւնն ամեն զոյջացած մեղաւորի համար միշտ պատրաստ է:

Մարդս «դուրբ է բէ՛ փչացած է՝ և ամէն մէկս Բարե Բա՛ն անդրաւանդէ: — Դեռ այսօր էլ կգտնուին մարդիկ, որ այդ հարցումին կը պատասխանեն թէ՛ «յո՛», «յո՛ղէ» է: Երբ որ մտածում են թէ՛ հողիդէն մարդս մշտական հակումն ունի ամեն արգելուած բանին, կամ երբ որ մտածում են ու տեսնում, որ ամենափոքր երեխաներն անգամ ընդդէմ են կենում իրանց ծնողաց յորդարներին ու խրատներին՝ և նրանց ասածների հակառակն են միշտ անել ուզում: Բայց շատ մարդիկ էլ կան, որ այդ հարցումին պատասխանում են թէ՛ «չ, «յո՛ղէ» չէ՛ մարդս և այդպիսի պատասխան են տալիս, երբ որ մտածում են հրեիներէի անմեղութեան վրայ, որոնց համար հէնց ինքն Յիսուսն ասում է թէ՛՝ ով որ նրանց նման չլինի, երկնքի արքայութիւնն երբէք մտնել չի կարողանալ: Կամ երբ որ մտածում են Աստուծոյ սրբութեան ու բարութեան վրայ, որից բոլորովին հեռու՝ կամ սրին հակառակ բան կլինէր, որ մարդս ստեղծուած լինէր մըշտական թշուառութեան համար:

Մարդոց՝ հէնց սկզբից բնութեամբ փչացած լինելու մտածմունքն՝ արդէն շատ տեսակ վէճերի, աղանդաւորութիւնների ու հերձուածողութիւնների պատճառ է տուել, ինչպէս որ մարդիկ, ընդհանրապէս, հէնց հնուց շատ անգամ և ամենից աւելի վիճել են այն բանի վրայ, ինչին որ ամեն բանից աւելի խելք հասցնել չէին կարող: Այդ տեսակ մտածմունքի ետեւից ընկնելու և քննելու առիթ են տուել գլխաւորապէս՝ շատ հին ժամանակներումն եղած հեթանոսական համաշխարհային իմաստութեան վարդապետութիւններն: Բայց հետեւեալներն ապացուցել են, որ այդպիսի բարակ ու խելք չհասցնելու բաների ետեւից ընկնելը վերջապէս մի օգուտ չի ունեցել. տեսել են ու հասկացել, որ իրանց խելքի ուժովն այդպիսի վիճելի խնդիրներ դէս ու դէն շուռ շուռ տալովը մարդիկ չեն լաւացել. տեսել են ու հասկացել, որ իրանց այդպիսի խոր մը-

ստամուռնքով ամեն այդպիսի անօգուտ բաների վրայ գլուխնե-
րը կոտորելուցն ոչինչ դուրս չի գալ, այլ աւելի լաւ կանեն,
որ՝ այդպիսի զուր աշխատութիւնով իրանց միտքը յոգնեցնե-
լու տեղը՝ Քրիստոսին սիրեն, Նորա պատուէրները պահեն ու
կատարեն:

Հենց գիտեմ էլ, որ Յիսուս՝ մեր սուրբ Հաւատի ստոյլա-
ծային Հիմնադիրն երբէք այդպիսի կարծիքաւոր բաներին մի
մեծ նշանակութիւն չէ տուել: Միայն Նրա առաքեալներն՝ և
մանաւանդ ուսումնական առաքեալը Պօղոս՝ երբեմն Հակումն
են ունեցել այդպիսի վիճելի խնդիրների վրայ մանրամասն խօ-
սելու, և Հեթանոսաց ու Հրէից գիտնականների և սուրբ գրքից
խոր Հմտութիւն ունեցողների հոգեւոր խօսելու մաքով, որ
իրանց քարոզածը Հասկանան:

Ինչ որ՝ իմ տղայական Հասակիցս սկսած՝ դիտել եմ իմ և
ուրիշների վրայ, այն է, որ ոչ մի մարդ՝ ինչ Հաւատից, ինչ
երկրից, ինչ ազգից էլ ուզում է, լինի, այնչափ բոլորովին
փչացած չէ, որ բարի բանի Համար ընդունակութիւններ չու-
նենայ: Այնպէս էլ իմ ամեն օրուայ կեանքիս մէջ արած դիտո-
ղութիւնս ինձ ցոյց է տալի անհերքելի կերպով, որ ոչ մի մարդ՝
մինչև անգամ իւր տղայական անմեղութեան օրերում՝ այն-
պէս բոլորովին բարի չէ, որ դէպի չարն էլ հակումներ չու-
նենայ:

Մարդո՛ւ, ինչպէս որ Աստուածանից ստեղծուած է, ինչ-
պէս որ չարին ընդունակ է, այնպէս էլ բարուն: Նրան աչքով,
գլխով է անում մեղքը, Նրան հրապուրում է առաքինութիւնն
էլ—Աստուած իրան ազատ կամք է տուել՝ և ներքին դատա-
ւոր, որ փորձի ու բարին ընտրի: Առանց ոյժ ունենալու
սխալ ու ծուռ բանն անելու, արդար և ուղիղ բանն անելու
Համար ոյժ չկայ, ինչպէս որ առաքինութիւնն իւր հրապոյրն
ունի, այնպէս էլ մեղքն իւր հրապոյրն ունի:

Ընդունակ լինելը թէ՛ առաքինութեան և թէ՛ մոլութեան՝
յառաջ է գալի մարդու երկու, այսինքն՝ մարմնաւոր ու զգա-
յալիան՝ և հոգեւոր ու բանաւոր բնութիւն ունենալուց, որ
Աստուած տուել է իրան: Եթէ մեր հուզոյ բնակութեան հա-

մօր հոգեղէն մօրմին ու բնութիւն ունեցած չլինէինք, մեր հոգին հրեշտակի նման միայն կլինէր, որ անընդունակ կլինէր թէ մեզք գործելու և թէ աւաքինութիւն, ինչու որ աւաքինութիւնն յառաջ է գալի միայն չարի հետ կռուելուց ու նրան յաղթելուց: Եթէ որ բանական հագի ունեցած չլինէինք, գաշտի անասուններ միայն կլինէինք, ոչ կարող կլինէինք բարձր կատարելութեան հասնել, ոչ էլ կոտորձուէինք մեղքից: Ինչու որ մեզքն յառաջ է գալի չար ցանկութեան մեր խղճմասնորին ընդդիմանալուց միայն:

Ինչ որ մեր մարմնաւոր մասն՝ կամ կողմն է, անդադար մեզ քաշում է երկրաւոր վայելչութիւններ անելու, որ մարմնոյ համար միայն զգալի է ու հաճելի: Իսկ ինչ որ մեր հոգեւոր մասն է՝ կամ կողմն, ձգաւում է սուրբ և աստուածային բանին, և լիախաբում է յաւիտեանական բանին, ինչու որ նրան է աղագիկց:

Սրա համար ասում է Պօղոս աւաքիալը թէ՝ « մարմնաւոր խորհուրդը (միտքը, կամքը) մահ է, իսկ հոգեւոր խորհուրդը՝ կեանք է և խաղաղութիւն: Ինչու որ մարմնաւոր խորհուրդը՝ թշնամութիւն է դէպի Աստուած այն պատճառով, որ Աստուծոյ օրէնքին հնազանդ չէ, ինչու որ կարող էլ չէ: Իսկ որով որ մարմնով են, Աստուծոյ հաճոյ լինել չեն կարող »:

Ի՞նչ է զգայական կարգութիւնը կամ զօրութիւնը: Դրդուիլը՝ կամ սրտանց ուզելն այն ամեն բանն, ինչ որ Դք զգացմանի միջոցաւ հաճոյական զգացողութիւն է պատճառում մեզ: Մեր հաճելը, ցանկանալն, որ մեզ պատիւ տան, հարուստ լինինք՝ ու կեանքի գիւրութիւններ ունենանք, մարմնաւոր սիրոյ հաճոյք զգանք ու լաւ ապրիւն, համով ուտենք ու խմենք, գործ կատարենք ու հանգստութիւն վայելենք, փայլենք, գեղեցիկ լինինք՝ այս բոլորն էլ արտաքին զգացողութիւնների ներգործութիւնն են մեր զգացմունքի վրայ, ուրեմն զգայական զօրութիւնն է:

Բայց ինչ որ մեր զգայութեան տակն է ընկնում և զգալի է մեզ, չասենք թէ՝ հենց մեզ մեզի պահպ է ու մեզ է, ինչպէս որ տգիտութիւնը կարող է շատ անգամ բացատրել: Ինչու որ

Աստուած Հայրն ինձ զգացմունք է տուել, որ ես, խելօք կերպով վայելելով Նորա պարգևած բարիքն, իմ բարերջանկութիւնս աշխարհիս վրայ, քանի գնամ, աւելացնեմ: Մէզ քան աբա՞ իլլին՝ այդ Բարիքը վայելեալ մեզ միայն սոյն ժամանակ, երբ որ խելք ու միտքս տամ այդ բարիքին. ու զանց անեմ՝ աւելի բարձր պարտականութիւններս:

Առաքինութիւնովն իմաստուն մարդն ոչ մի տեսակ զգայական կարիքն՝ իրրեւ հարկաւոր բան՝ իրան անվայել և անարժան չի համարում, ինչու որ գիտէ, որ զգացմունքի տակ ընկնող կորեւոր բանն էլ՝ իրրեւ զգացմանց պահանջ՝ շատ լաւ համաձայնեցնել կարելի է Գերագոյն էակի մեր սրտից արած պահանջմունքի հետ: Բայց նա միշտ գիտէ մարմնաւոր յօժարութիւնները սահմանի մէջ պահել ու չափաւորել. մինչև անգամ՝ զգայական վայելութիւնները գիտէ իւր բանական հոգւոյ զօրութիւնովն ազնուացնել, այնպէս որ՝ այդ վայելքի կողմից շատ բարձր և հեռու է մնում կենդանիներէն:

Բայց հենց որ մեր մարմնաւոր բնութիւնից առաջ եկած ցանկութիւններն ու փափազները՝ մեր դէպի բարի բանն ունեցած ուժից աւելի զօրանում են. հենց որ մեր հոգւոյ իշխանութիւնը սահմանափակում են և իրանց գերին են ուղղում շինել, իսկոյն վերանում է մեր մէջն եղած կանոնաւոր և ուղիղ յարաբերութիւնը. մեր ներքին մարդը խանգարւում է. ինչ որ մեր մէջն ամենաբարձր բանն է, ամենաստորն է դառնում. իսկ ամենաստոր և անցաւոր բանը՝ մեր գերագոյն բարիքն: Այսպէս մարդս յեղաշրջւում է Աստուծոյ սուրբ կարգը. բայց երբէք անպատիժ չի մնում իւր հասցրած վիրաւորանքի համար:

Աստուծոյ կամքն ու մարդուս սուրբ կեանքը նորանումը չէ, որ մարդս կեանքի վայելքն, որ պարգեւել է իրան իւր երկնաւոր Հայրն, ուրանայ, չուզենայ ճանաչել ու վայելել, այլ նորանումն է, որ իւր մոռն ունենայ այդ բարիքից՝ և աւելացնի իւր բարերջանկութիւնն, որի համար իւր Արարիչն իրան ստեղծել ու բնակեցրել է այս աշխարհում: Բայց երբ որ այդ վայելքը վատ ուղղութիւն է ստանում, ու վատ կերպով է բա-

նեղնվում, սաստիկ, մշտական և ամենայն լուր զգայմունք ճնշող ցանկութիւն է դառնում. երբ որ, օրինակի համար ասենք, խելքներս տանիլ ենք տալի լուր ու շատ ուտել՝ խմելու համար՝ և ամենեւին բանի տեղ չենք դնում՝ չափաւորութեան ու խնայողութեան պատուերներն, և այն աստիճան չափ ու սահմանից անց ենք կենում՝ ու գերի դառնում այդ մեր զեղխութեան, որ բոլորովին մոռանում ենք մեր շատ սուրբ պատականութիւններն, ուզում եմ ասել, մեր առողջութիւնը պահպանելն ու մեր ունեցած վիճակի ու պաշտօնի գործերը, մեր ընտանիքի համար հարկաւոր հոգացողութիւնները, կարօտների վրայ մոռճելն ու հոգս քաշելն, այն ժամանակ մեղքն է Պէժն, որ իշխանութիւն է բանեցնում. իսկ պարտաւորութիւնը, խելքն ու առաքինութիւնը նորա ձեռքը քանջւում են:

Ուրեմն կէտ է տեսում ամեն մի զգայական ցանկութիւն, որի մեծ ու սաստիկ լինելուց՝ մեր բոլոր լուր համոզմունքներն ոչնչանում են. Այգալիսի սաստիկ ցանկութիւնը բռնակալ է դառնում՝ և իւր ծանր լծի տակ քցում ու ճնշում մարդուս բանականութիւնն, աւերիչ է դառնում՝ և աւերում մեր սրտի սրբութեան աստուածային տաճարն. աշխարհիս մէջ կատարուած ամեն չարագործութիւնների ալբիւրն է դառնում. զրկում է մարդուս իւր առողջ դատողութիւնից ու խոհեմութիւնից, իւր ուժերից ու շատ անգամ իւր առաքինութեան հետ փչացնում է իւր կեանքն էլ:

Մտիկ տուէք ուժից ընկած, թուլացած, ոսկորն ու կաշին մնացած, գեռ ևս մեծ հասակ չունեցող այն անառակ մարդու վրայ՝ ու տեսէք թէ՛ ինչպէս դէս ու դէն ընկնելով հազիւ է ման գալիս, ինչպէս երեսի գոյնը թռած է, ինչպէս աչքերը խորն են ընկել, ինչպէս թառամած, ցամաքած է, քթից բռնիս, հոգին դուրս կգայ. նրա երակների մէջ արիւնը թունաւորուած է, նորա սրտի մէջ ուրախութիւն աստծ բանը չկայ: Մտիկ ժամանակում մահն իւր վրայ հասնելու պատճառները գիտէ. նա այսօրուանից իւր օրերը համբում է, մինչև որ բոլորովին ուժից ընկնի, պառկի՝ ու էլ չվերկենայ տեղից՝ և ազատուի իւր անտանելի կիանքից: Նա ապագա արդէն մահ-

ուսան ահն ու արհաւիրքը պաշարում են իրան։ Նա գիտէ՝ և անհծում է, իւր լաւ եղած բոլէներումն, իրան սպանողին, որ իւր անհամեստ ցանկութեան մեղքն է։ Իւր բանականութիւնն ասում է իրան թէ՛ ինքդ քեզ փրկիր, Իւր խղճմտանքն զգուշացնում է։ Բայց բոլորն էլ ի զուր է։ Յանկութիւնն նորա մէջ անասելի զօրութիւն և իշխանութիւն է ստացել։ Իւր կատաղի և անկուշտ կիրքն արհամարհում է ու ծաղրում՝ թէ՛ պատիւ և ամօթ ասած բանդ՝ թէ ծնողաց անէծք, և թէ ազնիւ մարդոց զգուանքն իրանից։

Մտիկ տուէք այն արեւցողի վրայ, որի սաստիկ խանգարուած ու փչացած առուջութիւնը յանկարծահաճ մահ է սպառնում իրան։ Ա՛խ, նա թշուառ է, մի գերիի նման մեծ դժուարութիւնով է ման ածում՝ բոլոր կեանքումն իւր կրքի ծանր շղթաները։ չի կարողանում փշրել ու ազատուել։ Կարելի է, հազար անգամ արգէն զըջացած լինի՝ իրան ամօթ անպատուութիւն բերող պակասութիւններին, հազար անգամ արտասուք թափած լինի իւր թուլութեան վրայ։ Բայց էլի փորձութեան ժամը միշտ խփում է և ինքն էլի չի կարող ընդդիմանալ իւր կրքին։ Իւր տունը ձեռքից գնացածի պէս է, մէջն օրինաւոր կեանք, ապրուստ չկայ, կարգ ու կանոնը կորել է։ Ամօթ և անպատուութիւն քաշելն աղքատութեան հետ ընկերացած, միասին մօտենում են իրան։ Կին ու երեխայք, արեւակից ու սրտացաւ բարեկամներն, որ իւր լաւն են ուզում, ձեռները դէպի իրան տարածած, աղաչում են թէ՛ ինքդ քեզ պահպանիր, քեզ յայթիւր, ետ կաց այդ պակասութիւնիցդ։ — Զո՛ւր է։ Ապրիւ չի կարող, եթէ որ իւր կեանքի մեծ մասն անբան անտունի պէս անց չկացնի։ Նա կորած է։ Զգում է՝ ու սիրտը ցաւում, բայց իւր մեղքը պի՛նդ սեղմել է նրան իւր գրկի մէջ։

Ա՛յս է վիճակն ամեն մի թշուառականի, որ իւր հակամիտութիւնները չի զսպել, այլ թողել է, որ մեծամասն ու կիրք դառնան՝ և վերջապէս կատաղի կերպով իւր վրայ իշխեն։ Ա՛յս է վիճակն այն փառասէր մարդու, որ մի աշխարհք է քար ու քանդ անում, որ իւր կեանքի բաղդաւորութիւնն ու հանգստութիւնը զոհում է իւր մոքումը դրած չհասնելու և չլի-

նեղու մի բանի, և արտասուք ու անէծք է թափում: Այս է վիճակը թաւղթ խաղացողի, նախանձից կուրացածի, ուրիշի անբաղդութեան վրայ ուրախացողի, որպէս և շուայլ կեանք անց կացնողի, ժլատի, գողի, և բարկասիրտ մարդու: Այս տեսակ մարդիկը բոլորն էլ թշուառ են, ամենքն էլ խղճալի են:

Կայ մարդ, որ իւր իսկ անձնական փորձովն զգացած չլինի կրքի սարսափելի զօրութիւնն: Ո՞ւմ վրայ գող չի գալի նրա ուժից, որ աննշմարելի կերպով, մեր լաւ տրամադրութեան մէջ ելած ու հաճոյք զգացած միջոցին, անմիջապէս և յանկարծ սկսում է մեր մէջ՝ մի սաստիկ վնասակար բոյոյի պէս՝ ծլել ու շուտ աճել՝ և վերջապէս՝ խեղդում է մեր բոլոր զգացմունքներն, ամենայն բան բոլորովին կործանող, քունդող կերպով, եթէ որ տրական ուժով և Աստուծոյ օգնութիւնովն՝ առանց ժամանակ կորցնելու՝ շուտով նրա առաջը չենք դուրս գալիս ու դէմ չենք դնում, և մեր կրօնն ու բանականութիւնը չենք պահպանում իւր սկզբնական վսեմ բարձրութեան մէջ:

Իսկ ի՞նչպէս և ճիշդիցն են առաջ գալիս կրքերը մարդուս մէջ: Այդ որոմի սերմը ցոյց տուէք ինձ ու ես կարող եմ հեշտ կերպով՝ առանց մեծ նեղութիւն քաշելու կամ չարչարուելու՝ ոչնչացնել. բայց երբ որ այդ սերմը դուրս եկաւ ու սկսեց մեծանալ, այն ժամանակ իւր փչած թռնաւորող շնչովն՝ իմ կեանքիս ոյժն ու զօրութիւնն էլ կոչնչացնի:

Շատ անգամ ծնունդ են առնում կրքերն՝ ու սկսւում արդէն մարդուս երեխայութեան ժամանակ: Աննշան պակասաւոր կողմերը կամ հակումներն, որ շատ անգամ երիտայ մեծացնողներին, դաստիարակողիների աչքին չեն ընկնում, չեն երեւում, կամ գոնէ բանի տեղ չեն դրւում, երեխայի այդ փոքր համարուած պակասութիւններն են, որ շատ անգամ՝ առաջուանից իմանալն անկարելի՝ ապագայում շինում են իւր գործելու յանցանքների ու քաջածնների շղթայի առաջին օղն, որ ժամանակի մէջ իրար հետ կապուելով, միանալով, մարդոց աչքի առաջն են հանում՝ չարագործութիւններից շինած, շարած, կապակցած ու միացած այդ սարսափելի շղթան: Արդէն պա-

տահել է, որ համով բաներ ուտել՝ խմել սիրող, որկորի ու փորի գերի եղողից գող է դուրս եկել, որ կեանքը կախաղանի վրայ է վերջացրել: Արդէն՝ շատ անգամ՝ մի աշակերտի ընդունականութիւնն ու յաջողակութիւնը չափից դուրս գովելը՝ նրա սրտի մէջ, քանի գնացել է, սնափառութիւնը մեծացրել՝ ու հասցրել անյադ փառասիրութեան: Մի երեխայ, որ իւր փոքր ժամանակից՝ սուտ խօսող ու կռուարար է եղել, յետոյ՝ իւր ընտանիքի, իւր ժողովրդի համար՝ իւր անտանիկ ընտելանալով՝ ասելի և անտանելի մարդ է դարձել, իւր ասածն, իւր սրտի ուզածն անող մի աղջիկ, որ այդ իւր անուիտան ընտելանալով է մեծացել, տան մէջ անպիտի բռնակալ է դարձել, որին տանել, դիմանալն անկարելի է եղել:

Նաո անգամ բանի տեղ չեն դնում ու չեն աշխատում, որ մի երեխայի՝ իւր փոքր հասակի մէջ ունեցած ծուռ կողմերը կամ պակասութիւնները՝ չթողնեն վրան մնայ ու իւր հետը մեծանայ, ինչու որ երկար ժամանակ բոլորովին անվնաս՝ ու իւր միամտութիւնիցն եղած ներելի՝ և այդպէս չմնալու երեխայական պակասութիւններ են համարում: Բայց երեխայի տարիքն տւնելովն, այդ պակասաւոր կողմերն էլ կամաց կամաց հետը մեծանալով, անսանձելի ընտելւն են դառնում, որ տանը մէջ կրակ է վառում ու բոլորին այրում: Ով որ մի ժամանակ մի թեթեւ հակումն է ունեցել վայելչութեան, վերջը վերջը մի անդիմադրելի ու մեծ հակամիտութիւն է ունեցած լինում ինքն իրան զուարճութիւնների տալու և վայելչութիւններ քաշելու, և առանց այդ ուրախութիւններին ապրել չէ կարողանում:

Սկիզբներումը դեռ զգուշացնում է իրան իւր ներքին դատաւորը, կամ վախեցնում է մի դժպտած դիպուած, Բայց շատ հեշտ է ներում մարդս իւր արած սխալներն, այլ և այլ պատճառներ բերելով՝ իբրև պատրուակ, օրինակի համար ասենք, գովիւններ են գտնւում մեր առատաձեռնութիւնն, ուր որ շոյալութիւն ենք արել, կամ անում: Ուրախ սրտի տէր մարդ են ասում՝ մեզ, երբոր մենք վայելչութիւն քաշելու համար գլուխ ետ դնող էինք՝ և այժմ էլ հոգի ենք տալիս: Այս

գովասանքն, որին հաւատում ենք ու չենք ուղղում քննել, իմանալ, ողորդ է, թէ սուտ կամ մեզ կեղծաւորութիւն անելու նման մի բան, որ երեսանց են միայն ցոյց տալի, իսկ սըրտով ամենեւին չեն հաւանում, այդպիսի գովասանքն, ասում եմ, աւելի ևս մեզ հաստատում է մեր ունեցած ու կատարած ցանկութիւնների մէջ, իսկ միշտ մեր այդ ցանկութիւններին հետեւելը՝ մեզ համար երկրորդ բնութիւն է դառնում, որ էլ ամենեւին չենք կարող թողնել: Երբ որ մեզ համար սովորութիւն դարձած մեր ցանկութիւնները մի օր կատարել չենք կարողանում, էլ աշխարհքը մեր աչքին չի գալի, մենք մեզ անբաղդ ենք համարում, ու վերջն այն է լինում, որ մեր անպիտան կիրքն՝ իւր բոլոր վատութիւնովը՝ մեր սրտումն այնքան պինդ ու հաստատ տեղ բռնած ու արմատացած է լինում, որ էլ չենք կարողանում միջիցը հանել:

Այսպէս մեր խառնուածքի, կամ բնութեան անուէն ունեցող մեր պակասութիւնները՝ մեր կատարի կրքերի աղբիւրն են. և ինչով որ երեխան, վատանալով, վատ արարմունքների մէջ առաջ է գնում, յետոյ՝ պակուած մարդ կամ կին եղած ժամանակն էլ՝ նոյն վատ արարմունքներովը՝ վատ մարդ, կամ կին է լինում:

Սովորութեան զօրութիւնն ու ներգործութիւնն անասելի կերպով մեծ է: Կասես թէ՝ մեր մարմնոյ բնութիւնը փոխում է, և հետը՝ մեր հոգւոյ բնութիւնն էլ: Այսպիսով մեր մարմինն էլ, հոգին էլ՝ անկամք գործիք են դառնում ու շարժում մի անգամ մեր վեր առած սովորութեան համեմատ:

Յոյց տուի քեզ արդէն թունաւոր որոմի սերմն—տաքիդ տակը քցիր, կոխտախր ու փչացնւր—քանի որ չի զօրացել, քեզ վերայ ոյժ չի բանեցրել՝ ու քո ազնիւ զգացմունքդ չի մեռցրել: Ամենից առաջ ջանք արա՝ որ քո փոքրիկ պակասութիւններդ հետ պատերազմես, յաղթես՝ ու մի անպիտան բանի նման չլինես: Եւ որ քո փոքրիկ պակասութիւններն՝ ժամանակով՝ քո մարմնիկդ հաղթանքով, քո խառնաւածիկդ հետեւանալով քեզ երեւան. ու մի հաշմանդ, ու մի հաշմանդանութեանդ մի հետեւելով, ինչպէս էլ որ քո անարժեքի լուրջութեան լինելով, ու անպիտանութեան մի անել արդիւր ուղած անպատ-

ճառ անելու, ինչո՞ւ որ զե՞ս հարազ համբերել, դիմանալ, որ սովորու-
նելուդ չանե՞ս, խղի՞ես, ի՞նչո՞ւ ես: — Լա՛ւ հասկացիր, որ այս մի քա-
նի խօսքերն են, որոնց մէջ ցոյց եմ տալի քեզ մարդուս ինքն
իւր վրայ իշխելու և Քրիստոսի նման լինելու ճանապարհն:

Ինքդ քեզ մի նեղիր՝ ու մոքիցդ մի անց կացնիր արդարա-
նալու, ասելով թէ՛ ինչ անեմ, ինչպէս անեմ, որ իմ մէջ հին և
արմատացած սովորութիւններս ամենեւին չեմ կարում փոխել
ու բոլորովին դէն քցել, Հենց որ տեսնում ես, որ այդ սովորու-
թիւններդ երկիւղ են տալի քեզ մոլութիւն դառնալու, կամ
մոլութիւն դարձած են արդէն, քո շատ սուրբ պարտականու-
թիւնդ է՝ իբրև բանական մարդ և քրիստոնեայ՝ արթուն մտ-
քով սկսես այդ սովորութիւններիդ դէմ պատերազմելու, որ
անդադար թուլացնես՝ և վերջապէս կոտրես դրանց ոյժն, որ
էլ չկարողանան քեզ մարդութիւնիդ հանելու, ոչ էլ խելքդ
ու պատիւդ կորցնել տան քեզ, Կոտրիր վատ սովորութիւննե-
րիդ ոյժն, եթէ ոչ՝ քեզ կկոտրեն այդ պախարակելի սովորու-
թիւններդ, քեզ մարդոց կարգից կհանեն՝ ու բոլորովին մի ան-
կարգ, անպիտան արարած կդարձնեն: Դու պէտք է այդ անես,
դու պարտական ես այդ բանն անելու, եթէ որ քեզ համար նշա-
նակութիւն ունի քո սրտիդ հանգստութիւնը, քո բաղդաւո-
րութիւնը, քո պատիւ ունենալը քեզ նման մարդոց մէջ, քո
անմահ հոգոյդ անարատ և արդար լինելն, որ այս և այն աշ-
խարհում երջանիկ լինի: Դու պէտք է այդ անես ու հարազ ել
ես, Քրիստոսի աշակերտն՝ ամենագոյնաբար յաղթութիւնն էլ
անելու ընդունակ է, միայն թէ լըջմտութիւնով ուղեկցայ: Սրա
համար երկու բան է պէտք. մէկ որ՝ քաջ մարդու պէս՝ ան-
դառնալի կերպով մեր մոքումը պիտի դնենք՝ բոլոր սրտով ու
հոգւով ինքներս մեզ յաղթելու անպատճառ. մէկ էլ որ՝ Աս-
տուծոյ օգնութիւնը խնդրենք, որ այդ մեր մտադրութիւնը
կատարենք: Աստուած միշտ մեզ օգնութեան կհասնի, ինչու
որ ունինք՝ մեզ մեծ յոյս ու վստահութիւն տուող՝ իւր այն
խօսքը թէ՛ «իմ զօրութիւնս տկարների մէջը կտեսնուի», և
արդէն փորձով տեսել ենք, որ այս այն՝ ինքն իրան գրեթէ
կորցրած մարդն, երբսր միշտ մեր երկնաւոր Հօր շնորհն է

խնդրել՝ փոխուելու, լաւանալու համար, անընկճելի սրտով ու յաջողութեան ուժով օժտուած է եղել:

Ուրեմն, սիրելիս, միայն սիրող չկոտրուի ու չթուլանաւ: Ամեն բանն էլ քո կեանքիդ մէջ դեռ կարող է շատ փոխուել. ինչ որ տգեղ էր, աւելի գեղեցկանալ, ինչ որ անազնիւ ու վատ էր, աւելի լաւանալ, ազնուանալ, քան թէ դու քո փոքրագու-թիւնովդ ու սակաւահաւատութիւնովդ, գուցէ կասկածում ես, որ կլինի: Բայց ոչ մի ընդհատմանակէտ մի կորցնի, սկսիր անելու բանդ. ի՞նչ ես իմանում թէ՛ էլ քանի տարի կեանք է պարգեւած քեզ այս աշխարհումս ապրելու, ու ե՞րբ պիտի ահեղ դատաստանի առաջը դուրս գաս՝ հաշիւ ու համար տալու: Քո բռնած վատ ճանապարհից դուրս գալդ և Աստուծոյ ընդունելի ուղիդ ճանապարհով գնալդ՝ այսօրուանից էգուց մի՛ ձգիր, ոչ էլ աւելի երկար ժամանակի. այլ՝ «այսօր, այսօր, որ Աստուծոյ յայնը լսում եմ, յեր սիրտդ ի՛ բարացնեմ»:

(Թարգմ.) Գ. Ե. Ա.

ԻՆՉՈՒՄՆ Է ԵՐՋԱՆԿՈՒԹԻՒՆԸ.

Երջանկութիւն, երջանկութիւն — որպիսի կախարդական խօսք է: Սրբան զանազան մտածմանց, ցանկութեանց, զգացմանց և յոյսերի առարկայ է: Մարդուս ընածին է երջանկութեան ցանկութիւնը: Իւրաքանչիւր մարդ համեմատ իւր զարգացման, հասարակական դրից և հոգեւոր տրամադրութեանց կազմում է իւր համար երջանկութեան գաղափար: Վաճառականը գտնում է իւր երջանկութիւնը 200,000ր վաստակելում, պաշտօնատարը լաւ թոշակի մէջ է տեսնում իւրը, զինուորը շքանշանի և գէներալութեան մէջ որոնում նորան, երիտասարդը գեղեցիկ և հարուստ հարս գտնելումն է տեսնում իւր բաղձը, երկրագործը հարուստ հունձ է ցանկանում և արհեստաւորը շատ գործ և ապսպարանք ունենալու է ցանկանում, ի վերջոյ գիտնականն ու ուսումնականն